ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» -------- 2025թ. N ---- Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2025-2028 ԹԹ.
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով և 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2025-2028 թվականների գործողությունների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2025-2028 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բաց կառավարման գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) բազմակողմ համագործակցություն ենթադրող նախաձեռնություն է, որն ունի հստակ ձևավորված օրակարգ և հանձնառություններ: Նախաձեռնությունը կոչված է համախմբելու կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին՝ միասին աշխատելու և ձևավորելու կառավարության ներառական զարգացման օրակարգը, կառավարման համակարգը թափանցիկ, հաշվետու, նորարար և մասնակցային դարձնելու ուղղությամբ:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունը ոչ միայն ստեղծում է կարևոր երկխոսություն շահագրգիռ կողմերի միջև, այլ նաև ապահովում տարածաշրջանային հարցերի վերհանման և քննարկման գործընթաց՝ նախաձեռնության անդամ երկրների հետ: Նախաձեռնության անդամ են հանդիսանում աշխարհի տարբեր ծայրերում գտնվող 70-ից ավելի երկրներ և ավելի քան 100 տեղական իշխանություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011 թվականին և անդամակցությունից ի վեր իրականացրել է չորս ազգային գործողությունների ծրագրեր:

Գործողությունների ծրագրերը միտված էին բարելավելու կառավարության կողմից ստանձնած բարեփոխումների օրակարգը՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար:

2022 թվականի մայիսի 17-ին Երևանը դարձավ «Տեղական Բաց կառավարում» նախաձեռնության անդամ, որին հաջորդեց քաղաքացիական հասարակության հետ հանդիպումների կազմակերպումը, հանրային քննարկումները, գործողությունների ծրագրի համաստեղծումը: Արդյունքում՝ 2022թ. դեկտեմբերի 27-ին Երևան քաղաքի ավագանու հ. 692-Ա որոշմամբ հաստատվեց Երևանի 2023-2024թթ. գործողությունների ծրագիրը:

Մեկ տարվա կտրվածքով մշակված գործողությունների ծրագրով քաղաքը ստանձնել էր երեք հանձնառություն: Դրանք են՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվող հանրային լսումների գործընթացին քաղաքացիների իրազեկվածության ապահովման շրջանակի ընդլայնում, համայնքային ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, «կանաչ զարգացում» հարթակի ստեղծում: Հանձնառություններից յուրաքանչյուրի իրականացման ճանապարհին տեղի են

ունեցել հանդիպումներ (այդ թվում՝ առցանց) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ Տեղական ինքնակառավարման մարմինների և Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցությունը, ջանքերի և ռեսուրսների միավորումը ազդեցիկ գործոն են հանրային կառավարման ոլորտի բարելավման, ժողովրդավարական կառավարման և քաղաքացիական հասարակության զարգացման համար: Այդ համագործակցությունն էականորեն կարող է նպաստել ապակենտրոնացված և թափանցիկ կառավարման հաջող փորձի ներդրմանը և կայացմանը: Այս ռեսուրսների միավորումը կարևոր խթան կարող է հանդիսանալ ՏԻՄ-երի կարողությունների և հնարավորությունների հզորացման համար: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ Երևանի ԲԿԳ գործողությունների 2023-2024թթ. ծրագրով նախատեսված աշխատանքների ավարտից հետո, Երևանի քաղաքապետարանը մեկնարկեց հաջորդ՝ 2025-2028թթ. գործողությունների ծրագրի համաստեղծման գործընթացը:

Գործողությունների ծրագրի մշակման նպատակով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև նախաձեռնության լուսաբանման նպատակով նախատեսված սոցիալական հարթակներում 2023թ. նոյեմբերի 7-ին տեղադրվեց նոր գործողությունների ծրագրի մշակման մասով առաջարկների ներկայացման հայտարարություն:

Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվեց 8 ուղղություն, որոնց շուրջ քաղաքացիները կարող էին ներկայացնել իրենց առաջարկները: Առաջարկների ներկայացման սկզբնական վերջնաժամկետ էր սահմանվել 2024թ. փետրվարի 1-ը, որը երկարաձգվեց, և նոր վերջնաժամկետ սահմանվեց ապրիլի 16-ը:

Ընդհանուր առմամբ հավաքագրվեց շուրջ 200 առաջարկ: Առաջարկներն ուղղված էին հասարակական տրանսպորտային համակարգի բարեփոխմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների ոլորտի բարելավմանն ու պարզեցմանը, քաղաքային իշխանության գործունեության թափանցիկությանը, հաշվետվողականությանը, նորարարությանը, կայուն սոցիալական միջավայրի մասնակցայնության ապահովմանը, աղբահանության, կանաչ տնտեսության ոլորտում նորարարությանը:

Համաստեղծման գործընթացում, Երևանի քաղաքապետարանը, կարևորելով քաղաքացիական հասարակության կարծիքները, առաջարկները և քաղաքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, կազմակերպեց «Համախմբվելով հանուն մեկ նպատակի» խորագիրը կրող հանրային տեղեկատվական բացօթյա հանդիպում, որի նպատակն էր որոշումների կայացման գործընթացում մասնակցայնության բարձրացումը: Միջոցառմանը մասնակցել են նաև Բաց կառավարման գործընկերության անդամ մյուս համայնքների՝ Արմավիրի, Մեծամորի, Վանաձորի ներկայացուցիչները ևս:

Տեղական ԲԿԳ յուրաքանչյուր համայնք ներկայացրել է նախաձեռնության շրջանակում իրականացված և նախատեսվող աշխատանքները: Երևանի կողմից իրականացված աշխատանքների ներկայացման հատվածում տեղադրված էր նաև նոր գաղափարների և մտքերի հավաքագրման արկղիկ, որը հնարավորություն էր տալիս քաղաքացիներին տեղում գրել իրենց առաջարկները Երևանի՝ Բաց կառավարման գործընկերության երկրորդ գործողությունների ծրագրի համաստեղծման շրջանակներում:

Հավաքագրելով համաստեղծման գործընթացում ստացած բոլոր առաջարկները՝ դրանք դասակարգվեցին մի քանի հիմնական ոլորտային ուղղությունների, որի արդյունքում էլ ձևավորվեցին հաջորդ քառամյա ժամանակահատվածում իրականացման ենթակա հանձնառությունները:

Նախաձեռնության հետ կապված տեղեկատվության հասանելիության և ընթացիկ գործունեության վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների շրջանում իրազեկվածությունն ապահովելու նպատակով ստեղծվեցին Երևանի «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության համար նախատեսված սոցիալական էջեր, որտեղ տեղադրվում է նախաձեռնության շրջանակում իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Անդամակցելով «Տեղային Բաց կառավարում» նախաձեռնությանը՝ Երևանի քաղաքապետարանը կշարունակի իրականացնել բաց կառավարման սկզբունքներին համահունչ քաղաքականություն՝ կառավարման բաց, արդյունավետ և հաշվետու գործելու հանձնառություն, ինչը համայնքային կառավարման ոլորտում ակտիվ քաղաքացիական մասնակցությունը խթանելու կարևորագույն մեխանիզմներից է:

Ծրագրի նախագիծը 2024թ. նոյեմբերի 8-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի՝ 2023թ. նոյեմբերի 6-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հունիսի 7-ի հ. 1881-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ. 3637-Ա որոշմամբ հաստատված խորհրդի անդամներին, որոնք նոյեմբերի 14-ին հրավիրված նիստի ընթացքում կողմ են քվեարկել ծրագրի նախագիծը նոյեմբերի 14-29-ը հանրային քննարկման ներկայացնելուն:

Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում հրապարակվել է ծրագրի նախագծի էլեկտրոնային տարբերակը:

2024 թվականի նոյեմբերի 26-ին Երևանի քաղաքապետարանում

կազմակերպվել է հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի նոյեմբերի 9-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նիստին ներկա խորհուրդի անդամների ձայների մեծամասնությամբ տրվել է դրական եզրակացություն նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելուն:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետը՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի 2025-2028թթ. գործողությունների ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ «Երևան քաղաքի բաց կառավարման գործընկերության նախաձեռնության գործողությունների 2025-2028 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ եզրակացություն	Նախագծում կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1	Անահիտ Ասատրյան, Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային հանրապետական արհմիություն	«Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի պիլոտային ծրագրի հանձնառության նպատակ է սահմանված ՏԻՄ համակարգի գրավչության աճն ու քաղաքապետարանը գրավիչ աշխատավայր դարձնելը երիտասարդության շրջանում: Ողջունելի է Երևանի քաղաքապետարանի և ՏԻՄ համակարգի գրավչության բարձրացման նպատակը սահմանելը, սակայն, հարկ ենք համարում նշել, որ արտաքին գրավչության և ներառականության բարձրացման համար կարևոր նախապայման է նաև համակարգում ներքին գրավչությունն ու ներառականությունը: Համայնքային ծառայողների համար աշխատանքի գրավչության բարձրացումը սերտորեն կապված է քաղաքային իշխանության և համայնքային ծառայողներին ներկայացնող արհմիությունների կամ ճյուղային արհմիության միջև կանոնավոր, արդյունավետ և ժողովրդավար համագործակցությունից: Ըստ այդմ, հանձնառության շահագրգիռ մասնակից կողմ է, նախևառաջ, Երևան քաղաքի համայնքային աշխատողներին միավորող Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային արհմիությունը: Այդպիսի համագործակցության ինստիտուցիոնալ դրսևորումը թե՛ հանձնաժո <<< օրենսդրության, թե՛ << կողմից վավերացված Աշխատանքային միջազգային կազմակերպության վավերացված կոնվենցիաների ու <<—ԵՄ Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի դրույթների՝ սոցիալական գործընկերությունն է: Համաձայն << աշխատանքային օրենսգրքի (հոդված 48)՝ վերոնշված ճյուղային արհմիությունը Երևանի քաղաքապետի սոցիալական գործընկերն է համայնքային ծառայողների աշխատանքային հարաբերությունների համատեքստում: Սոցիալական գործընկերությունը դա սոցիալական գործընկերների (տվյալ դեպքում՝ արհմիության և քաղաքապետի) միջև որոշումների կայացման փոփոխ խորհրդակցություններ են և աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ կոլեկտիվ բանակցությունները: Սոցիալական գործընկերության սկզբունքը բխում է նաև «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության սկզբունքներից և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից (մասնավորապես՝ 8-րդ նպատակից): Կոլեկտիվ բանակցության իրավական ձևակերպումն, իր հերթին, արտացոլվում է կոլեկտիվ պայմանագրի կնքմամբ: Աշխատանքային օրենսգրքի գլուխ 8-ը և 9-ը սահմանում են, թե ինչ է կոլեկտիվ պայմանագիրը և ովքեր են դրա կողմերը: Մասնավորապես, հոդված 48-ի համաձայն՝ «Ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղի գործատուների միությունը և արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը: Եթե գործատուն Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, ապա ճյուղային կոլեկտիվ պայմանագրի կողմերն են արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և համապատասխան պետական մարմինը կամ համայնքի ղեկավարը»: Վերոնշվածից հետևում է, որ Հայաստանի պետական հիմնարկերի, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության համար, որը միավորում է համայնքային աշխատողներին, կոլեկտիվ պայմանագրի մյուս կողմ է հանդիսանում Երևանի քաղաքապետը: Նույն օրենսգրքի համաձայն՝ կոլեկտիվ պայմանագիրը գործատուի և արհմիության միջև գրավոր համաձայնություն է, որը կարգավորում է աշխատողների և գործատուի միջև աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական կամ տնտեսական հարաբերությունները: Ընդ որում (Աշխատանքային օրենսգիրք, հոդված 49), կոլեկտիվ պայմանագրով աշխատողների համար կարող են սահմանվել լրացուցիչ երաշխիքներ: Այսպիսով, ներդրված կոլեկտիվ բանակցությունների համակարգը նշանակում է, որ աշխատողներն արհմիության միջոցով նույնպես ներգրավված են աշխատողների աշխատանքային և սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում, որ աշխատողների համար նախատեսված են օրենքով և աշխատանքային պայմանագրով չնախատեսված լրացուցիչ արտոնություններ, և որ աշխատողներն ավելի պաշտպանված են աշխատանքային հարաբերություններում: Կոլեկտիվ բանակցության պատշաճ ներդրված համակարգն աշխատատեղը գրավիչ դարձնելու և ՏԻՄ համակարգի գրավչությունը բարձրացնելու միակ իրավական, ինստիտուցիոնալ և արդյունավետ գործիքն է համարվում: Այն նաև ժողովրդավար, թափանցիկ ու հաշվետու քաղաքային կառավարման պարտադիր նախապայմանն է: Հետազոտությունների համաձայն՝ գործող կոլեկտիվով պայմանագրերն ու ակտիվ սոցիալական գործընկերությունը դրական է անդրադառնում նաև քաղաքային կառավարման և քաղաքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների որակի վրա, բարձրացնում է աշխատողների մոտիվացիան և աշխատանքի արդյունավետությունը: Իմաստալից կոլեկտիվ պայմանագրերի առկայությունը նաև կարևոր ցուցիչ է միջազգային կառույցների կողմից երկրի ժողովրդավարության և աշխատանքային պայմանների գնահատման ընթացքում: Այսպիսով, առաջարկվում է «Երևան քաղաքի բաց կառավարման գործընկերության նախաձեռնության գործողությունների 2025-2028 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծում նախատեսել նաև սոցիալական	Հանձնառությամբ սահմանված գործողությունները կրում են պիլոտային բնույթ և դրանց հաջող ու արդյունավետ իրականացման արդյունքում՝ հաջորդիվ հնարավոր է քննարկել նաև ներկայացված առաջարկի ներառումը:	Նախագծում փոփոխություններ չեն կատարվել

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ 2025-2028 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	Ներկայացված առաջարկությունների և առարկությունների հիման վրա նախագծում փոփոխություն չի կատարվել	-	-	-

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2025թ.
հ. -Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ 2025-2028 ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Նախագիծ
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2025թ.
հ. -Ա որոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ 2025-2028ԹԹ. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բաց կառավարման գործընկերությունը (այսուհետ՝ ԲԿԳ) բազմակողմ համագործակցություն ենթադրող նախաձեռնություն է, որն ունի հստակ ձևավորված օրակարգ և հանձնառություններ: Նախաձեռնությունը կոչված է համախմբելու կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին միասին աշխատելու և ձևավորելու կառավարության ներառական զարգացման օրակարգը, կառավարման համակարգը թափանցիկ, հաշվետու, նորարար և մասնակցային դարձնելու ուղղությամբ:

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունը ոչ միայն ստեղծում է կարևոր երկխոսություն շահագրգիռ կողմերի միջև, այլ նաև ապահովում տարածաշրջանային հարցերի վերհանման և քննարկման գործընթաց՝ նախաձեռնության անդամ երկրների հետ: Նախաձեռնության անդամ են հանդիսանում աշխարհի տարբեր ծայրերում գտնվող 70-ից ավելի երկրներ և ավելի քան 100 տեղական իշխանություններ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միացել է «Բաց կառավարման գործընկերություն» (ԲԿԳ) նախաձեռնությանը 2011 թվականին և անդամակցությունից ի վեր իրականացրել է չորս ազգային գործողությունների ծրագրեր:

Գործողությունների ծրագրերը միտված էին բարելավելու կառավարության կողմից ստանձնած բարեփոխումների օրակարգը՝ դարձնելով դրանք ավելի թափանցիկ, հաշվետու, մասնակցային և նորարար:

ԵՐԵՎԱՆԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

2022 թվականի մայիսի 17-ին Երևանը դարձավ «Տեղական Բաց կառավարում» նախաձեռնության անդամ, որին հաջորդեց քաղաքացիական հասարակության հետ հանդիպումների կազմակերպումը, հանրային քննարկումները, գործողությունների ծրագրի համաստեղծումը: Արդյունքում՝ 2022թ. դեկտեմբերի 27-ին Երևան քաղաքի ավագանու հ. 692-Ա որոշմամբ հաստատվեց Երևանի 2023-2024թթ. գործողությունների ծրագիրը:

Մեկ տարվա կտրվածքով մշակված գործողությունների ծրագրով քաղաքը ստանձնել էր երեք հանձնառություն: Դրանք են՝ քաղաքապետարանի կողմից կազմակերպվող հանրային լսումների գործընթացին քաղաքացիների իրազեկվածության ապահովման շրջանակի ընդլայնում, համայնքային ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի ներդրմանն

ուղղված աշխատանքների իրականացում, «կանաչ զարգացում» հարթակի ստեղծում: Հանձնառություններից յուրաքանչյուրի իրականացման ճանապարհին տեղի են ունեցել հանդիպումներ (այդ թվում՝ առցանց) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Կարևորելով համայնքի զարգացման և առաջխաղացման ուղենիշ հանդիսացող՝ համայնքի զարգացման միամյա, հնգամյա, ռազմավարական ծրագրերի, համայնքային բյուջեի քննարկման, հաստատման գործընթացում **քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությունը**՝ այդ գործընթացի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու և առավել արդյունավետ իրականացնելու համար քաղաքը հանձնառեց օրենքով սահմանված մեխանիզմների կիրառմանը զուգահեռ՝ ձեռնարկել, իրականացնել միջոցառումներ հանրային մասնակցայնության շրջանակի ընդլայնման համար, կիրառել վարքաբանական գործիքներ, որոնք կխթանեն քաղաքացիների մոտ հետքրքրվածությունն ու կնպաստեն ակտիվ մասնակցությանը:

Այս համատեքստում՝ օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման միամյա, հնգամյա, ռազմավարական ծրագրերի, համայնքային բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումներ և բաց լսումներ պետք է կազմակերպվեն Երևանի քաղաքապետարանում, սակայն, հանձնառության իրականացման շրջանակում առաջին անգամ նախաձեռնվեց հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպում Երևանի բոլոր 12 վարչական շրջաններում: Այսուհետ՝ հանրային կարևորություն ներկայացնող նախագծերի քննարկման նպատակով բոլոր վարչական շրջանների ղեկավարների կողմից հրավիրվում են հանրային բաց լսումներ քաղաքացիների, կրթական, մասնագիտական և այլ գործունեություն ծավալող մարդկանց հետ, որի ժամանակ ներկայացվում են յուրաքանչյուր վարչական շրջանում նախատեսվող աշխատանքները, նախագծերը, հավաքագրվում են քաղաքացիների առաջարկները և ըստ այդ առաջարկների իրականացվում ծրագրային փոփոխություններ: Արդյունքում՝ համեմատելով վերջին 3-5 տարվա ընթացքում հանրային քննարկումներին քաղաքացիների մասնակցության մակարդակը՝ հնարավոր է գրանցել հետաքրքրվածության և մասնակցայնության աճ՝ 60%-ով:

Քաղաքացիական հասարակության և քաղաքային իշխանության միջև երկխոսության ամրապնդման նպատակով՝ Երևանը, ոչ միայն Հայաստանում, այլև տարածաշրջանում, առաջին և միակ քաղաքն է, որը 2022 թվականի սեպտեմբերին դարձավ People Powered - Global Hub for Participatory Democracy նախաձեռնության անդամ: Նախաձեռնության՝ «Կլիմայական ժողովրդավարության արագացուցիչ» ծրագրի շրջանակում Երևան համայանքի և «ԷԿՈԼՈՒՐ» տեղեկատվական հասարակական կազմակերպության միջև կնքվեց համագործակցության հուշագիր և մշակվեց «Քաղաքացիական հասարակությունը դառնում է Երևանի Կանաչ Անցման ակտիվ մասնակիցը» խորագիրը կրող միամյա նախագիծ: Նախագծով նախատեսվում է՝ փորձագիտական հանրության մասնակցությամբ կազմակերպել թվով 6 թեմատիկ կլոր սեղան-քննարկումներ, որտեղ քաղաքային իշխանության ոլորտային ներկայացուցիչների կողմից կներկայացվեն նախատեսվող և իրականացված ծրագրերը, քաղաքացիական հասարակության կողմից կբարձրաձայնվեն խնդիրներն ու մարտահրավերները: Նախագծի իրականացմամբ ակնկալվում է՝

- Երևանի քաղաքապետարանի կլիմայական ծրագրերի գնահատում,
- Փորձագիտական հանրության կողմից առարկայական առաջարկությունների, լուծումների փաթեթի ներկայացում Երևանի քաղաքապետարանին,
- Ներկայացված առաջարկությունների հիման վրա միամյա, հնգամյա, ռազմավարական ծրագրերի պլանավորում և մշակում:

Այս նախագծի իրականացումը ևս մեկ քայլով մոտեցնում է քաղ. հասարակության հետ կայուն երկխոսության արդյունքում հանրային կարևորություն ունեցող մասնակցային քաղաքային որոշումներ ունենալուն: Նախագծի իրականացումը մեկնարկել է 2023 թվականի

հուլիսին:

Երկրորդ հանձնառությամբ իրականացվեց համայնքային ծառայողների շրջանում **բարեվարքության համակարգի կայացման գործընթացը**՝ համատեղ քննարկելով և պլանավորելով ոլորտային ակտիվ ներգրավվածություն և հետաքրքրվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև կառավարության ներկայացուցիչների հետ: Այս համատեքստում, համագործակցելով ԱՄՆ ՄԶԳ Հայաստան Բարեվարքության (ARMENIA INTEGRITY PROJECT) ծրագրի հետ, համայնքային ծառայողների շրջանում իրականացվել է բարեվարքության վերաբերյալ դասընթացների շարք՝ Երևանի քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) համայնքային ծառայողների, Երևանի քաղաքապետարանի էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության կազմակերպիչների մասնակցությամբ:

Իրականացվել են հանդիպումներ և դասընթացներ հետևյալ թեմաներով՝

- Երևանի քաղաքապետարանի համայնքային ծառայողների վերապատրաստողների վերապատրաստման դասընթաց՝ «Բարեվարքությունը հանրային ծառայությունում. համայնքային ծառայողների վարքագծի կանոնագիրքը» թեմայով
- Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատում
- Հակակոռուպցիոն դպրոցի 7-րդ խմբի ընդունելություն
- «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի թափանցիկության և հաշվետողականության գնահատում:

Հանձնառության իրականացմամբ բարելավվել է քաղաքապետարանի ավելի քան 120 աշխատակիցների բարեվարքության աստիճանը, բարեվարքության վերաբերյալ վերջիններիս կարողություններն ու գիտելիքները, նրանց կողմից բարեվարքության ընկալումը՝ նպաստելով **թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների** ապահովմանը:

Գործողությունների ծրագրի երրորդ հանձնառությամբ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական էջում ստեղծել է **«Կանաչ զարգացում» անվանումով հարթակ** և **Օդի աղտոտվածության ցուցանիշների հարթակ,** որը ներառում է համապարփակ մոտեցում մունիցիպալ կառավարման բոլոր մակարդակներում կայուն գործելակերպի նկատմամբ: «Կանաչ զարգացում» հարթակը պարբերաբար թարմացվում է և պարունակում է քաղաքապետարանի կողմից իրականացված էներգաարդյունավետ ծրագրերի, դրանց իրականացման արդյունքում կրճատված ջերմոցային գազերի արտանետումների, խնայված էլեկտրաէներգիայի վերաբերյալ տեղեկատվություն:

Երևանը Հայաստանի խոշորագույն արդյունաբերական, տնտեսական և միևնույն ժամանակ վարչական կենտրոնն է, որում կենտրոնացած է արդյունաբերական ձեռնարկությունների 36%-ը: Երևանում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Այժմ մայրաքաղաքում հաշվառված է անշարժ աղբյուրներից մթնոլորտն աղտոտող նյութեր արտանետելու թույլտվություն ունեցող 671 կազմակերպություն:

Երևանի, ինչպես նաև մյուս խոշոր քաղաքների համար օդային ավազանի աղտոտման մակարդակի պարբերաբար ուսումնասիրություններ են կատարվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2022թ. ձեռք է բերվել օդի որակի դիտարկման 5 սենսոր, որոնք հնարավորություն են տալիս առցանց կարգով հետևելու օդի մեջ ազոտի օսիդների և փոշու մասնիկների պարունակությունը: Տեղեկատվությունը փոխանցվում է ինքնաշխատ եղանակով (յուրաքանչյուր 10 րոպեն մեկ), որն արտացոլվում է առցանց հարթակի վրա: 2023թ. իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի հ.405-Ն որոշման մեջ լրացումներ և, համաձայն այդ փոփոխությունների, 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության

ողջ ընթացքում կառուցապատողը շինհրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակը մշտադիտարկող սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ: Երևանի քաղաքապետի 2023թ. նոյեմբերի 29-ի հ.3932-Լ որոշմամբ սահմանվել են Երևանում 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացքում կառուցապատողի կողմից շինարարական հրապարակի տարածքում տեղադրվող օդի որակի մշտադիտարկման սարքավորումների տեխնիկական չափորոշիչները և առցանց հարթակի հասանելիության պայմանները:

Հանձնառության իրականացման արդյունքում կբարելավվի իրազեկվածությունը **«կանաչ» ծրագրերի իրականացման և վերահսկման նկատմամբ:**

Այս հանձնառության շրջանակում կյանքի կոչվեց «Կանաչ կնիք-կանաչ գործարք» նախաձեռնությունը, որի նպատակն էր բնակիչների կողմից վճարված հարկերից գոյացած համայնքային բյուջեից համայնքային կազմակերպություններին տրվող ֆինանսավորումը դարձնել նպատակային, կանոնակարգված և հիմնավորված, խրախուսել համայնքային կազմակերպություններին և հիմնարկներին շարժվել կանաչ օրակարգով, փոխանցել վերջիններիս արդի հմտություններ «կանաչ» գնումների ընթացակարգի վերաբերյալ, բարձրացնել իրազեկվածության մակարդակը էներգախնայող, էներգաարդյունավետ և բնահեն լուծումներին ուղղված միջոցառումների մասին:

Միջոցառման շրջանակում համայնքային ենթակայության ավելի քան 400 կազմակերպություններում իրականացվեց էներգետիկ տվյալների հավաքագրում և կարիքների գնահատում: Ստացված էներգետիկ տվյալների հավաքագրման, վերլուծության և ամփոփման արդյունքում ընտրվեց մեկ համայնքային ենթակայության կազմակերպություն՝ մանկապարտեզ: Հենց այս մանկապարտեզի կողմից առաջարկված ֆինանսապես և արդյունավետության տեսանկյունից հիմնավորված ծրագիրն էլ հաղթող ճանաչվեց Երևանի քաղաքապետարանի կողմից: Արդյուքնում՝ մանկապարտեզում իրականացվող էներգաարդյունավետ ծրագրի շնորհիվ կնվազի մանկապարտեզի տարեկան էներգածախսը, կբարձրանա հարմարավետության մակարդակը, կնվազի նաև համայքային բյուջեի կողմից մանկապարտեզին տրամադրվող ամենամյա ֆինանսավորումը: Հաղթող ճանաչված մանկապարտեզին Երևանի քաղաքապետի կողմից շնորհվեց «Կանաչ կնիք» հավաստագիր՝ որպես կանաչ օրակարգով շարժվող և «կանաչ» գնումներին նախապատվություն տվող մանկապարտեզ:

2023թ. սեպտեմբերի 6-ին Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում տեղի ունեցով Բաց կառավարման գործընկերության Գլոբալ գագաթնաժողովը, որին մասնակցում էր կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ավելի քան 2000 ներկայացուցիչ աշխարհի տարբեր անկյուններից: Գագաթնաժողովի ընթացքում Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության առաջատար բարեփոխիչներին ճանաչելու և պարգևատրելու նպատակով Աֆրիկա և Մերձավոր Արևելք, Ամերիկա, Եվրոպա, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանների Բաց կառավարման գործընկերության անդամ երկրների և տեղական իշխանությունների շրջանում «Ոգեշնչող բարեփոխումներ» անվանակարգում հայտարարված մրցույթին Երևանը, վեց հաղթող տեղական իշխանությունների շարքում, ճանաչվել է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի հաղթող: «Ոգեշնչող բարեփոխումներ» անվանակարգին Երևանը դիմել էր Տեղական Բաց կառավարման գործընկերություն 2023-2024թթ. Գործողությունների ծրագրով ստանձնած 3-րդ հանձնառության՝ «Կանաչ կնիք-կանաչ գործարք» ենթաբաղադրիչի շրջանակում:

Նախագիծ
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2025թ.
հ. -Ա որոշման

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

➢ «Արևելյան գործընկերության համայնքային երկխոսություն» միջոցառման շրջանակում Երևանը հյուրընկալեց «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության տարածաշրջանային համակարգող գործընկերներին, որի ժամանակ ներկայացվեց քաղաքի բաց կառավարման օրակարգը, քննարկվեցին արդեն իսկ իրականացված և նախատեսվող անելիքներ:

➢ ՀՀ Վարչապետի աշխատակազմի և ԲԿԳ/Հայաստան քարտուղարության հետ համատեղ իրականացվող «ԲԿԳ Հայաստան 2022-2024թթ. գործողությունների ծրագրի գնահատման» հաշվետվության ներկայացմանը նվիրված ամփոփիչ միջոցառմանը ներկայացվել է նաև Երևանի տեղական բաց կառավարման հաշվետվությունը՝ գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ:

➢ «Բաց Կառավարման Գործընեկերության շաբաթ» ամենամյա միջոցառման շրջանակում կազմակերպվել է պարային ֆլեշմոբ՝ բաց կառավարման սկզբունքները պարունակող պաստառների ուղեկցմամբ: Ֆլեշմոբի նպատակն էր բարձրացնել հանրային իրազեկվածությունը քաղաքի մասնակցային, հաշվետվողական և թափանցիկ կառավարման սկզբունքների հանձնառման վերաբերյալ՝ կոչ անելով քաղաքացիներին մասնակցե՛լ հանրային քննարկումներին, բարձրաձայնե՛լ իրենց կարծիքը, ներկայացնե՛լ առաջարկներ և լինե՛լ իրազեկ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ Տեղական ինքնակառավարման մարմինների և Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցությունը, ջանքերի և ռեսուրսների միավորումը ազդեցիկ գործոն են հանրային կառավարման ոլորտի բարելավման, ժողովրդավարական կառավարման և քաղաքացիական հասարակության զարգացման համար: Այդ համագործակցությունն էականորեն կարող է նպաստել ապակենտրոնացված և թափանցիկ կառավարման հաջող փորձի ներդրմանը և կայացմանը: Այս ռեսուրսների միավորումը կարևոր խթան կարող է հանդիսանալ ՏԻՄ-երի կարողությունների և հնարավորությունների հզորացման համար: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ Երևանի ԲԿԳ գործողությունների 2023-2024թթ. ծրագրով նախատեսված աշխատանքների ավարտից հետո, Երևանի քաղաքապետարանը մեկնարկեց հաջորդ՝ 2025-2028թթ. գործողությունների ծրագրի համաստեղծման գործընթացը:

Գործողությունների ծրագրի մշակման նպատակով Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև նախաձեռնության լուսաբանման նպատակով նախատեսված սոցիալական հարթակներում 2023թ. նոյեմբերի 7-ին տեղադրվեց նոր գործողությունների ծրագրի մշակման մասով առաջարկների ներկայացման հայտարարություն:

Երևանի քաղաքապետարանի կողմից առաջարկվեց 8 ուղղություն, որոնց շուրջ քաղաքացիները կարող էին ներկայացնել իրենց առաջարկները: Առաջարկների ներկայացման սկզբնական վերջնաժամկետ էր սահմանվել 2024թ. փետրվարի 1-ը, որը երկարաձգվեց, և նոր վերջնաժամկետ սահմանվեց ապրիլի 16-ը:

Ընդհանուր առմամբ հավաքագրվեց շուրջ 200 առաջարկ: Առաջարկներն ուղղված էին հասարակական տրանսպորտային համակարգի բարեփոխմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների ոլորտի բարելավմանն ու պարզեցմանը, քաղաքային իշխանության գործունեության թափանցիկությանը, հաշվետվողականությանը, նորարարությանը, կայուն սոցիալական միջավայրի մասնակցայնության ապահովմանը, աղբահանության, կանաչ տնտեսության ոլորտում նորարարությանը:

Նախագիծ
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2025թ.
հ. -Ա որոշման

Համաստեղծման գործընթացում, Երևանի քաղաքապետարանը, կարևորելով քաղաքացիական հասարակության կարծիքները, առաջարկները և քաղաքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, կազմակերպեց «Համախմբվելով հանուն մեկ նպատակի» խորագիրը կրող հանրային տեղեկատվական բացօթյա հանդիպում, որի նպատակն էր որոշումների կայացման գործընթացում մասնակցայնության բարձրացումը: Միջոցառմանը մասնակցել են նաև Բաց կառավարման գործընկերության անդամ մյուս համայնքների՝ Արմավիրի, Մեծամորի, Վանաձորի ներկայացուցիչները ևս: Տեղական ԲԿԳ յուրաքանչյուր համայնք ներկայացրել է նախաձեռնության շրջանակում իրականացված և նախատեսվող աշխատանքները: Երևանի կողմից իրականացված աշխատանքների ներկայացման հատվածում տեղադրված էր նաև նոր գաղափարների և մտքերի հավաքագրման արկղիկ, որը հնարավորություն էր տալիս քաղաքացիներին տեղում գրել իրենց առաջարկները Երևանի՝ Բաց կառավարման գործընկերության երկրորդ գործողությունների ծրագրի համաստեղծման շրջանակներում:

Հավաքագրելով համաստեղծման գործընթացում ստացած բոլոր առաջարկները՝ դրանք դասակարգվեցին մի քանի հիմնական ոլորտային ուղղությունների, որի արդյունքում էլ ձևավորվեցին հաջորդ քառամյա ժամանակահատվածում իրականացման ենթակա հանձնառությունները:

Նախաձեռնության հետ կապված տեղեկատվության հասանելիության և ընթացիկ գործունեության վերաբերյալ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքացիների շրջանում իրազեկվածությունն ապահովելու նպատակով ստեղծվեցին Երևանի «Տեղական ԲԿԳ» նախաձեռնության համար նախատեսված սոցիալական էջեր, որտեղ տեղադրվում է նախաձեռնության շրջանակում իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Անդամակցելով «Տեղային Բաց կառավարում» նախաձեռնությանը՝ Երևանի քաղաքապետարանը կշարունակի իրականացնել բաց կառավարման սկզբունքներին համահունչ քաղաքականություն՝ կառավարման բաց, արդյունավետ և հաշվետու գործելու հանձնառություն, ինչը համայնքային կառավարման ոլորտում ակտիվ քաղաքացիական մասնակցությունը խթանելու կարևորագույն մեխանիզմներից է:

Նախագիծ
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2025թ.
հ. -Ա որոշման

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանձնառություն 1. «Ծրագրային բյուջետավորման» ներդրում		
Հանձնառությունն իրականացնող մարմին		Երևանի քաղաքապետարան
Հանձնառությունն իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ Քրիստինե Ավետիսյան
Էլ. հասցե Հեռախոս		qristine.avetisyan@yerevan.am 011514180
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	
	Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Խնդրի սահմանումը		Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի՝ «Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է համայնքի զարգացման հնգամյա ծրագրի՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա»: Հավելվածային ձևերում բացակայում են ծախսերի արդյունքային ցուցանիշները, ուստի դժվար է գնահատել համայնքի բյուջեի ձևավորման սկզբունքներից՝ արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը: Վերջինս հանրության համար կարող է տեսանելի լինել միայն համապատասխան ձևաչափերում ոչ ֆինանսական ցուցանիշների արտացոլմամբ:
Հիմնական նպատակը		Ծրագրային մեթոդաբանությամբ բյուջեի կազմումը համահունչ է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված բյուջետային համակարգի սկզբունքներին: Մասնավորապես, հանձնառությունը նպատակ է հետապնդում բարձրացնել Երևան քաղաքի ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը: Նման ձևով բյուջետավորումը կօգնի համատեղել և ներդաշնակեցնել ծախսային քաղաքականությունը, միջնաժամկետ ծախսերի և հնգամյա զարգացման ծրագրերը մեկ միասնական

	փաստաթղթում՝ ապահովելով ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:
Հանձնառության համառոտ նկարագրություն	Ծրագրային բյուջետավորումը մասնակիորեն ներդրվել է միջնաժամկետ ծախսերի ծրագրի հավելվածային ձևաչափերում: Մասնավորապես, Երևանի քաղաքապետարանի տեսլականի և նպատակների հիման վրա մշակվել են ծախսային ծրագրեր, իսկ ձևաչափերում յուրաքանչյուր ծրագրի մասով սահմանվել են նպատակներ, վերջնական արդյունքներ և արդյունքային ցուցանիշներ: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքի վրա կմշակվի նաև 2025թ. տարեկան բյուջեի նախագիծը: Հանձնառության շրջանակներում աստիճանաբար ֆինանսական համակարգը անցում կկատարի ծրագրային մեթոդաբանությամբ բյուջետավորմանը: Այս գործընթացի իրականացումը կուղեկցվի մարդկային ռեսուրսների գծով կարողությունների զարգացմամբ, ծրագրային բյուջետավորմանն առնչվող գործընթացների ավտոմատացմամբ և արդյունքային ցուցանիշների կատարելագործմամբ և ընդլայնմամբ: Ծախսերի արդյունքային ցուցանիշները կհրապարակվեն՝ ներառելով ծառայությունների որակի գնահատում և քաղաքացիների գոհունակության տվյալներ:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը, ենթագործողությունները	
2026թ. տարեկան բյուջեի նախագծում ծրագրային բյուջետավորման ձևաչափով	2025թ. նոյեմբեր
Ծրագրային ապահովում՝ ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման համար	2026թ. հուլիս
2027թ. տարեկան բյուջեի նախագծում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության ամբողջական ներդրմամբ	2026թ. նոյեմբեր

2027թ. բյուջեի կատարման հաշվետվության կազմում ծրագրային բյուջետավորման ձևաչափերին համապատասխան		2028թ. մարտ
Հանձնառություն 2. «Մասնակցային բյուջետավորման» ներդրում		
Հանձնառությունն իրականացնող մարմին		Երևանի քաղաքապետարան
Հանձնառությունն իրականացնող մարմնի պատասխանատու անձ		Ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ Քրիստինե Ավետիսյան
Էլ. հասցե Հեռախոս		qristine.avetisyan@yerevan.am 011514180
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	
	Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ	Համաշխարհային բանկ
Խնդրի սահմանումը		Ժողովրդավարական գործընթացներում բնակիչների մասնակցայնությունը որոշումների կայացման գործընթացում անդրժելի պահանջ է: Մասնակցայնության ապահովումը անհրաժեշտ է նաև բյուջետային գործընթացներում: Համայնքի բնակիչների մասնակցայնությունը ապահովելու նպատակով, նախքան տարեկան բյուջեի նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, Երևանի քաղաքապետը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ: Վերջին տարիներին առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ հանրային լսումների փուլում բնակիչների մասնակցայնության մակարդակը ցածր է և ոչ այդքան արդյունավետ:
Հիմնական նպատակը		Հանձնառության նպատակն է բյուջեի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավել բնակիչներին: Այն կօգնի բարելավել բնակչի և քաղաքապետարանի միջև փոխհարաբերութ-յունները, վերացնել հակասությունները և փոխզիջման հասնել բյուջետային ռեսուրսների արդյունավետ ծախսման հարցի շուրջ՝ նպաստելով բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետների ըմբռնմանը և այլընտրանքային տարբերակներից լավագույնի ընտրությանը:

Հանձնառության համառոտ նկարագրություն	Բնակիչների մասնակցայնությունը ապահովելու նպատակով «Ակտիվ քաղաքացի» հարթակում կներդրվի մասնակցային բյուջետավորման համար նախատեսված համապատասխան ծրագրային գործիքակազմ: Դրա շնորհիվ բնակիչները կկարողանան ներկայացնել իրենց գաղափարները տարեկան բյուջեի նախագծում ներառելու համար: Այս գործընթացը կկրի շարունակական բնույթ, և յուրաքանչյուր տարի, մասնակցային բյուջետավորում իրականացնելու համար՝ բյուջեում կնախատեսվեն ֆինանսական միջոցներ: Այդ նպատակով՝ յուրաքանչյուր տարի կառանձնացվի որևէ ծախսային ուղղություն, որի շրջանակում համայնքի բնակիչները կկարողանան ներկայացնել իրենց առաջարկները: Այնուհետև սահմանված չափանիշներին համապատասխանող ծրագրային առաջարկները կդրվեն քվեարկության:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը, ենթագործողությունները	
էլեկտրոնային գործիքակազմի մշակում	2025թ. հուլիս
Գաղափարների առաջարկման փուլ	2025թ. սեպտեմբեր
Ներկայացված առաջարկների օգտին քվեարկության փուլ	2025թ. նոյեմբեր

Հանձնառություն 3. «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի պիլոտային ծրագիր		
Հանձնառությունն իրականացնող մարմին		Երևանի քաղաքապետարան
Հանձնառությունն իրականացնող մարմնի պատասխանատու անձ		«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Մերի Հարությունյան
Էլ. հասցե Հեռախոս		m.harutyunyan@yerevan.am 011 514-456
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Զարգացման գործընկերներ
	Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ	Հայաստանում գործող լիցենզավորված բարձրագույն ուսումնական հաստատություններ «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն » ՀԿ ԱՄՆ ՄԶԳ Հայաստան Բարեվարքության ծրագիր (ARMENIA INTEGRITY PROJECT) «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
Խնդրի սահմանումը		Երիտասարդների մասնակցությունը պետության քաղաքական-տնտեսական կյանքին ժողովրդավարության ու տնտեսության առաջընթացի կարևոր նախապայման է: Սակայն մեր օրերում տեղական ինքնակառավարման

	համակարգի նկատմամբ հետաքրքրվածությունը կարիք ունի խրախուսման և ներգրավման մեղանիզմների կիրառման: «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի պիլոտային ծրագրի ռազմավարական նպատակը տեղական ինքնակառավարման համակարգի վերափոխումն է հաշվետու, թափանցիկ, նորարար, դինամիկ և օպտիմալ հանրային կառավարման՝ առաջադեմ կառավարչական գործելակերպի, քաղաքականության մշակման նորարար գործիքների և վերջին ժամանակների տեխնոլոգիական լուծումների ներդրման միջոցով: Պիլոտային ծրագրի իրականացմամբ ակնկալվում է բարձրացնել հանրային ծառայության արտաքին գրավչությունը, հանրության մասնակցությունը քաղաքականությունների մշակման ողջ շրջափուլում, բարելավել պետական համակարգի գործունեության նկատմամբ հանրային ընկալումները և իրազեկվածությունը, ամրապնդել պետական ինստիտուտների հանդեպ հանրության վստահությունը:
Հիմնական նպատակը	Տեղական ինքնակառավարման համակարգի գրավչության աճ, համայնքային զարգացման և ուրբան կառավարման հարցերին երիտասարդության ներգրավում, քաղաքապետարանի՝ որպես գրավիչ աշխատավայր երիտասարդության շրջանում առաջմղում և ջատագովություն:
Հանձնառության համառոտ նկարագրություն	2022 թվականի մայիսին ՀՀ կառավարությունն ընդունել է «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարություն: Կառավարություն 4.0» փաթեթը, որով պետական հատվածի համապարփակ բարեփոխումների իրագործման հանձնառություն է ստանձնել՝ ռազմավարական պլանավորում, հանրությանը ծառայությունների մատուցում, մարդկային ռեսուրսների կառավարում և ինստիտուցիոնալ արդիականացում ուղղություններով: Երևանի քաղաքապետարանը, անմասն չլինելով ազգային մակարդակում իրականացվող կառավարման բարեփոխումներից և հետապնդելով դինամիկ, մրցունակ, առաջադեմ և գրավիչ միջավայր ձևավորելու, ինչպես նաև՝ մարդկային կապիտալի ու տաղանդների կառավարման ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներդնելու նպատակ՝ նախաձեռնում է «Մոդել Երևան»

	քաղաքային կառավարման ակադեմիայի անցկացման պիլոտային ծրագրը: Նշվածը միջազգային մեծ տարածում ստացած և հեղինակություն վայելող ձևաչափ է երիտասարդության շրջանում ինստիտուտների հանրահռչակման, տվյալ ինստիտուտի մանդատի մասով երիտասարդների իրազեկվածության ու մասնակցայնության բարձրացման, տաղանդների բացահայտման և ներգրավման համար: Մշտական հիմունքներով նման հարթակներ գործում են, օրինակ, ՄԱԿ-ի, Եվրոպական Միությանը և այլ կառույցների ներքո: Երիտասարդների ներգրավումն ու մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերին և ուրբան կառավարմանը խթանելու համար նախատեսվում է մշակել և գործարկել «Մոդել Երևան»՝ քաղաքային կառավարման ակադեմին՝ որպես ինագուրալ պիլոտային ծրագիր, որի խնդիրներն են՝ – Քաղաքային կառավարման ու համայնքային իշխանությունների գործունեության վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության բարձրացումը – Տարբերի արդիական խնդիրների շուրջ երիտասարդների մոտ համակարգային դատողականության ու կրիտիկական մտածողության ձևավորումը – Երիտասարդների մոտ պետական/համայնքային կառավարչական միջավայրերում հանրային խոսքի, բանավեճի, քննադատական ու վերլուծական մտածողության ու բանակցային հմտությունների զարգացումը – Երիտասարդների միջև սոցիալական ցանցերի և ծրագրի շրջանավարտների դինամիկ համայնքի ձևավորումը՝ որպես սոցիալական կապիտալ: Ծրագրի գործառնական շրջանը 5 ամիս է: Այն նախատեսվում է կազմակերպել Երևանում: Ծրագիրը բաղկացած է 3 փուլից՝ նախապատրաստում (3 ամիս), սիմուլյացիոն դերախաղ-մրցույթ (1 ամիս), արդյունքների ամփոփում (1 ամիս): Վերջին փուլում որոշվում են մրցույթի հաղթողները և ամփոփվում ծրագրի ընդհանուր արդյունքները: Պիլոտի արդյունքում քաղված դասերի և արդյունքների հիման վրա կմշակվի և կառաջարկվի «Մոդել Երևան» ուրբան կառավարման ակադեմիայի ներդրման առաջարկ՝ որպես Երևանի

	քաղաքապետարանի դրոշակակիր և առանցքային ծրագիր տաղանդների բացահայտման ու կառավարման ու երիտասարդների աշխատանքային ներգրավման մասով: Ծրագրի շարունակականության համատեքստում կդիտարկվեն «Մոդել Երևան» դերախաղ-մրցույթի պարբերականությունը, մեթոդաբանությունը և իրագործման մեխանիզմները, պրոտոկոլի մշակումը, անցկացման վայրերի ընտրության մեխանիզմը, շրջանավարտների ցանցի ձևավորման հարցը, համայնքի ֆինանսավորման հնարավորությունը, միջազգային զարգացման գործընկերների, մասնավոր, կրթական ու ակադեմիական հատվածների հետ համագործակցության ձևաչափն ու մեխանիզմները, այլ համայնքների և օտարերկրյա այլ քաղաքների հետ համագործակցության ձևաչափերը: Դերախաղ-մրցույթի շրջանակում կներառվեն հանրային բողոքարկման և դիմումների քննության գործընթացների սիմուլյացիաներ: Մասնակիցների ընտրության չափորոշիչներում առաջնահերթություն կտրվի սոցիալապես խոցելի և տարածքային կամ էթնիկ փոքրամասնություններից երիտասարդներին:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը, ենթագործողությունները	
Փուլ 1. Նախապատրաստում, 3 ամիս Այս փուլում ապահովվում են մրցույթի և՛ բովանդակության մշակման, և՛ կառավարչական բնույթի աշխատանքները, և՛ կազմակերպչական հարցերի լուծումը: Մասնավորապես՝ – Ձևավորվում է մրցույթի Ղեկավար Կոմիտեն – Նույնականացվում/ ընտրվում է մրցույթի կազմակերպիչը – Հաստատվում են մրցույթի մանրամասն նկարագիրը, ծրագիրը, պրոտոկոլները – Անցկացվում է մասնակիցների ընտրական փուլը – Ներգրավվում են կամավորները և մասնակիցների մենթորները – Ապահովվում է մասնակիցների նախնական իրազեկումն ու ուսուցումը, այդ թվում՝	2026 – 2027 թթ. Հունվար-մարտ

անհրաժեշտ ուսուցում հանրային կառավարման ու հանրային քաղաքականության հիմունքների ու պրակտիկայի վերաբերյալ, խաղային և սիմուլյացիոն դասընթացներ հանրային բանակցությունների ոլորտում, ինչպես նաև՝ ճանաչողական այցեր մրցույթի ծրագրում ներգրավված պետական կառույցներ Ընտրական փուլն անցկացվում է հետաքրքրվածության հայտերի և թեմատիկ էսսեների մրցույթի հիման վրա, որի թեման հաստատում է Ղեկավար Կոմիտեն:	
Փուլ 2. Դերախաղ-մրցույթ, 1 ամիս Այս փուլը ներառում է բուն Դերախաղ-մրցույթը, որը կարող է բաղկացած լինել տարբեր բաղադրիչներից՝ կենտրոնանալով քաղաքային իշխանության գործունեության շուրջ, սակայն ներառելով նաև ենթախաղեր, որոնք հնարավորություն կտան մասնակիցներին փորձառություն ստանալ գործադիրի և օրենսդիր ու դատական իշխանությունների և տեղական ինքնակառավարման հետ փոխհարաբերությունների դաշտում:	2026-2027թթ. Ապրիլ-մայիս
Փուլ 3. Արդյունքների ամփոփում, 1 ամիս Վերջին փուլում որոշվում են մրցույթի հաղթողները և ամփոփվում ծրագրի ընդհանուր արդյունքները, մասնավորապես՝ – Մասնակիցների գնահատում և ըստ անվանակարգերի հաղթողների ճանաչում. – Մրցույթի փակման գալա միջոցառում և մրցանակաբաշխություն. – Ծրագրի արդյունքների գնահատում:	2026-2027թթ. Հունիս-հուլիս
Հանձնառություն 4. Երևանի քաղաքապետարանի թվային փոխակերպում	
Հանձնառությունն իրականացնող	Երևանի քաղաքապետարան

մարմին		
Հանձնառությունն իրականացնող մարմնի պատասխանատու անձ		«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ տնօրեն՝ Սարգիս Մանուկյան
Էլ. հասցե **Հեռախոս**		tmcyc@yerevan.am +374 11 514 707
Այլ շահագրգիռ մասնակից մարմիններ	**Պետական կառավարման և այլ մարմիններ**	Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ կադաստրի կոմիտե
	Հասարակական կազմակերպություններ, մասնավոր հատված, այլ կազմակերպություններ	«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Խնդրի սահմանումը		Քաղաքային կառավարման համակարգում ներկայում առկա չէ էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակ, ինչը կնպաստի քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, պարզեցմանն ու քաղաքացի-համայնք երկխոսության կայացմանը: Այդ նպատակով Երևանի քաղաքապետարանի թվային փոխակերպման ռազմավարությամբ սահմանված են առաջնահերթ նախագծեր, որոնք նախատեսվում է իրականացնել 2025-2028թթ.:
Հիմնական նպատակը		Ծրագրի նպատակն է՝ -Ներդնել ներքին գործառույթների ավտոմատացման համակարգեր -Ապահովել քաղաքացիներին համայնքի կողմից մատուցվող քաղաքային ծառայությունների՝ էլեկտրոնային եղանակով տրամադրման հնարավորություն -Բարձրացնել մատուցվող ծառայությունների արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը, կառավարման ճկունությունը և ավելացնել բյուջետային մուտքերը -Ներդնել տվյալների տարածական վերլուծության համակարգեր, որոնք կապահովեն տվյալահեն որոշումների ընդունումը

Հանձնառության համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է ստեղծել Երևանի էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակ («YES platform»), որը նպատակ ունի ապահովել քաղաքային ծառայությունների միասնական միջավայր, պարզեցնել քաղաքացիներին մատուցվող ծառայությունները: Այն նախատեսում է տարատեսակ համակարգերում ապահովել քաղաքացու միասնական օգտահաշիվ և կատարված գործարքների պատմության հասանելիություն: Համակարգը պետք է հենված լինի միասնական ֆինանսական հաշվի համակարգի վրա և քաղաքացու պարտավորությունները մարի ինքնաշխատ՝ դեպի մեկ հաշիվ սկզբունքով: Ծրագրի շրջանակում նախատեսվում է նաև Քաղաքի թվային կրկօրինակի ստեղծում («Twin city»), որը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների և դրանց տարածական նկարագրերի թվայնացում, զետեղում մեկ տարածատեղեկատվական (GIS) միջավայրում, որտեղ հնարավորություն է ընձեռվելու ավտոմատացնել գործառույթները և կատարել տարածական վերլուծություններ:
Հանձնառության կատարման ստուգման և չափման փուլերը, ենթագործողությունները	
- YES համակարգի ծրագրային հենքի ստեղծում - Միասնական օգտահաշվի համակարգի ստեղծում - Միասնական ֆինանսական հաշվի գործիքակազմի ստեղծում - Էլեկտրոնային ծառայությունների հարթակի ստեղծում - Պարտավորությունների մարման գործիքակազմի ստեղծում - Բջջային հավելվածի ստեղծում - «Twin city» քաղաքի հեռահար զոնդավորում ֆոտոգրամետրիայի և Lidar համակարգերի միջոցով - Քաղաքային ենթակառուցվածքներում ներդրված տարածական տվյալներ գեներացնող համակարգերի և IoT սարքերի ինտեգրացիա միասնական GIS հարթակ	2025թ. հուլիս-դեկտեմբեր
- YES համակարգի զարգացում - Քաղաքային այլ ծառայությունների գործառույթների ավտոմատացման ծրագրային հենքի ստեղծում և փոխկապակցում YES համակարգին	2026թ. հունվար-դեկտեմբեր

- «Twin city» Քաղաքային ենթակառուցվածքներում ներդրված տարածական տվյալներ գեներացնող համակարգերի և IoT սարքերի ինտեգրացիա միասնական GIS հարթակ - BIG DATA հարթակի ներդրում և գործարկում	
- YES համակարգի զարգացում - Քաղաքային այլ ծառայությունների գործառույթների ավտոմատացման ծրագրային հենքի ստեղծում և փոխկապակցում YES համակարգին - Քաղաքային ենթակառուցվածքներում ներդրված տարածական տվյալներ գեներացնող համակարգերի և IoT սարքերի ինտեգրացիա միասնական GIS հարթակ - Քաղաքային կառավարման կենտրոնի ստեղծում	2027թ. հունվար-դեկտեմբեր
- YES համակարգի զարգացում - Քաղաքային այլ ծառայությունների գործառույթների ավտոմատացման ծրագրային հենքի ստեղծում և փոխկապակցում YES համակարգին - Քաղաքային ենթակառուցվածքներում ներդրված տարածական տվյալներ գեներացնող համակարգերի և IoT սարքերի ինտեգրացիա միասնական GIS հարթակ - Արհեստական բանականության գործիքակազմերի կիրառում քաղաքային ծառայությունների տրամադրման գործառույթներում	2028թ. հունվար-դեկտեմբեր